№ 288 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 288

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԲԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեքում

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1912 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միւնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կացնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում էին մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

Գրական-գիտական-գեղարուեստական-հասարակական եւ խաղաղասիրական

ԱՄՍԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՑ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամսագիրը հրատարակվելու է ամեն ամսվայ վերջին և բաղկացած է լինելու առնուազն 8 տպագրական թերթից (նաբօր) և աւելի՝ եթէ միջոցները ներեն։

Ռուսաստանի համար { Տարեկան բաժանորդագին — 6 ռուբլի։ «Մշակի» տարեկան բաժանորդների համար 4 ռուբլի։

Արտասահմանի համար { Եւրոպա — 20 ֆրանկ. «Մշակի» բաժ. համար 16 գ. Ամերիկա — 4 դոլար. » » » 3 դոլ. Թիւրքիա — 6 ռուբլի » » » 4 ր. Պարսկ. — 6 ռուբլի » » » 4 ր.

Ամեն մի համարը առանձին արժէ 50 կոպ.։

Հասցէն. Тифлисъ, Сергіевская № 5. Редакція журнала „Ароръ".
Tiflis, Rédaction de la Revue „Aror".

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

„ԱՐՕՐ"

1910 և 1911 Թ. Թ.

Ցանկացողները կարող են առանալ «Արօրի» նախորդ, այն է 1910 և 1911 թ. թ. տարեգրքերը, վճարելով իւրաքանչիւր տարվան 4 ռուբլի. իսկ «Մշակի» կամ «Արօրի» 1911թ. բաժանորդները՝ 3 ռուբլի։

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 29-ին

ԲՕԳՈՒՍ

Կովկասի Հայոց Դպրոց. Ուսուցչ. եւ Վարժ. Միութեան Տեղի կունենայ ներկայացում և գրական-երաժշտական երեկոյթ

I

ՄԻ ԲԱՌ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Կոմեդիա 1 արար. Թարգմ. Աւետեանի

II

ՎԱՐՁՈՒ ԿԻՆ

Վոդեվիլ 1 արար. Թարգմ. Վրոյրի

Մասնակցում են՝ տ. տ. Գուլազեան, Զաբէլ, Ցասմիկ և պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Աւետեան, Ղազարեան, Մամիկոնեան, Միրզոյեան և Տէր-Առաքելեան։

Ռէժիսեօր՝ Ց. Աբէլեան

III

Դրական-երաժշտական բաժնում մասնակցում են՝ տ. տ. Սիրանոյշ, Մայուրեան, Ե. Աֆրիկեան և Ցարութիւնեան, պ. պ. դաշնակահար Ն. Ֆ. Տիգրանեան, ջութակահար Վրոյր, երգիչ Մ. Աղայեան։

Երգելու է Ներսիսեան դպրոցի խումբը ղեկավարութեամբ պ. Ս. Մելիքեանի։

Նուագակցելու է դաշնամուրով օր. Ն. Ասլամազեան։

ՊԱՐԵՐ ՊՏԻ-ՇՎՕ, ՏՈՒՄԲՈՉԿԱ, ԲՈՒՖԷՏ և ԾԱՂԻԿՆԵՐ

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։ Տեղերի գները 3 ր. մինչև 1 ր., աշակ. 50 կ.։

Տոմսակները վաճառվում են Ժողովարանում։

ՖԱԲՐԻԿԻ ԱԷՆՖԻԱԶԻԱՆՑԱ ՊԱՊԻՐՈՍԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏՆԻԱ ԳԻՆԸ 25 ԿՈՊ. 10 ՇԱ. 6 ԿՈՊ. 100 ՇԱ. 60 ԿՈՊ.

ПАПИРОСЫ ЛЕВЪ 20 шт. 5 коп. ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ ЭКСТРА 15 шт. 6 коп. ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

(ա. հ. կ.)

Բերլինի հռչակաւոր

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԹՈՒ և սրտի։ Սրսկումներ նաև ասուբերկուլիններով։ Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։

Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.

(ա.օ.) առ. 989. 100—65

ԲԺԻՇԿ

Գր. ՄԱԿԱՐԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանձակայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆոն 615.

Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը

(ա.հ.կ.) առ. 819. 100—47

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր Ճրաճնիացի գրող

ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ

ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ

նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը

„ԱՐՕՐ" ամսագրի

հրատարակութեամբ

Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մտաւորականի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։

Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։

10—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 ռուբլի, և այլն։

Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։

Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.

Մլքայէլեան փող. № 6, մուտքը պեքէուլիայից։

(ա.հ.կ.) առ. 876. 50—46

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

II

Մենք սահմանեցինք իւրաքանչիւր հարիւր հազար հոգի ազգաբնակութեան վրա մի պատգամաւոր։

Դա, ինչպէս ասացինք, մօտաւորապէս գծագրված մի թիւ է։ Նրա շուրջը կարող են լինել թեքումներ դէպի 80 և 110 հազար։

Եթէ մեր կովկասեան յաջորդութիւնները համապատասխան լինէին իրանց ազգաբնակութիւններին թիւերով չափին, այն ժամանակ կարելի կը լիներ թեմական պատգամաւորութիւնները վերածել յաջորդութիւնների կողմից ընտրված պատգամաւորութիւններին, իսկ Թիւրքիայում կարելի կը լիներ մի քանի փոքր և սակաւահայ վիճակներ կամ թեմեր վերածել աւելի խոշոր համախմբումների։

Սակայն՝ իրականութիւնը ցոյց է տալիս, որ յաջորդութիւնները իրանց ներկայ կազմով դեռ ևս չեն կարող լիովին ծառայել իբրև ընտրողական շրջաններ։ Եւ որպէսզի կարողանան այդ դերին համապատասխան լինել, պէտք է որոշ փոփոխութիւնների ենթարկվեն՝ սղման կամ յաւելման գործողութիւններին։

Եթէ ընդունենք ռուսահայ աշխարհական պատգամաւորների քանակի համար ենթադրական 16 թիւը, որ նշանակեցինք անցեալ անգամ, խնդիրը կը վերածվի այն հարցին, թէ ինչպէս դասաւորել այդ 16 պատգամաւորներին։

Անշուշտ՝ այնպիսի շրջաններ, ինչպէս են Բեսարաբիայի և Աստրախանի թեմերի հասարակածները իրանց ցրված հայ ազգաբնակութեամբ, կամ Սեւծովափեայ և Վրաստանի հայաբնակ տեղերը, կը պահանջեն ուրոյն կարգադրութիւններ անել և յատուկ պատգամաւորներ սահմանելու նախագիծ մշակել։

Այն ժամանակ ռուսահայ պատգամաւորների թիւը կարող է աւելանալ մի երկուսով, բայց նոյնպիսի հանգամանքներ կարող են տեղի ունենալ նաև թիւրքահայերի բնակատեղերում։

Անտարակոյս՝ մի քանի բազմամարդ և խիտ բնակեցված ընտրական շրջաններում, ինչպէս օրինակ Շիրակի մասերում կարելի է իրաւունք տալ ընտրելու ոչ թէ մի, այլ երկու պատգամաւոր, համեմատ ազգաբնակութեան քանակի։

Եւ այդպէս՝ հիմնական սկզբունք պէտք է ընդունել պատգամաւորների ընտրութիւնը ըստ ազգաբնակութեան քանակի, իսկ իբրև ուղղումներ պէտք է հաշուի առնել ժողովրդի աշխարհագրական և քաղաքական դիրքը այս ու այն երկիրներում։

Եթէ կը կազմվի յանձնաժողով ընտրական ծրագրի մշակման համար, նա նկատի կառնի այդ բոլոր հանգամանքները և կամբողջացնի ծրագիրը։

Ընտրական բարեփոխութեան պահանջը զգացվում է ոչ միայն պատգամաւորների թիւի նոր դասաւորութեան գործում, այլ և պատուիրակների թիւի որոշման մէջ։ Մինչև այժմ եղած ընտրութիւնների ժամանակ, օրինակ, Թիֆլիսը տուել է պատուիրակների աւելի մեծ թիւ, համեմատած գիւղական ազգաբնակութեան պատուիրակների համապատասխան թիւի հետ։ Եւ ինքը ընտրական գործը կանոնաւորված չէ կատարելապէս։

Ամենաէական խնդիրներից մէկն է գաղտնի քուէարկութեան մտցնելը ընտրական գործի բոլոր ելևէջներում, սկսած պատուիրակային ընտրութիւններից մինչև կաթողիկոսի ընտրութիւնը էջմիածնի Մայր Տաճարում։

Գաղտնի քուէարկութիւնը վերջ կը դնի շատ անպատեհութիւնների, որոնք ներկայումս գոյութիւն ունեն, աւելորդ տեղ յուզելով մտքեր և առաջացնելով անախորժ շփումներ։

Եւ վերջապէս պէտք է բարեփոխել վերջնական քուէարկութեան եղանակը, դնելով միանգամից քուէտուփեր բոլոր կաթողիկոսական թեկնածուների համար։ Ներկայումս էջմիածնի Մայր-Տաճարում ընտրութեան վերջին օրը դրվում է նախ մէկ թեկնածուի քուէտուփը և կատարվում ընտրութիւնը, յետոյ դրվում է նոյն քուէտուփը երկրորդ թեկնածուի համար, ապա նոյնը երրորդի և վերջապէս չորրորդի համար։

Դա անյարմար ձև է, որը առիթ է տալիս թիւրիմացութիւնների և երկարացնում է ընտրութեան գործողութիւնը բոլորովին աւելորդ տեղը։

Մենք չենք շօշափում ընտրական գործի միւս մանրամասնութիւնները։ Մեր միտքն էր ուրուագծել նրա գլխաւոր կէտերը։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

պատկերը

VIII

Դեռ էջմիածնից խփած իմ մի հեռագրի մէջ՝ ես ամենայն գիտակցութեամբ յայտարարեցի ի գիտութիւն հայ հասարակութեան, թէ «Թիւրքիայի և Ռուսաստանի հայութեանց միջև խորը վիհ բացող պառակտման և անհաշտութեան գործում վերին աստիճանի վատ դեր խաղացին երդուեալ-հաւատարմատար Սամսոն Ցարութիւնեան, ուսուցիչ Վրթանէս Փափազեան և յայտնի խուժանապետներ Մինրդատ Հայկազն և Երուանդ Տէր-Անդրէասեան»։

Այսօր ընաւ առիթ չունեմ յետ վերցնելու իմ այդ խօսքերը, թէև Սամսոն Ցարութիւնեան աշխատեց հերքել և ասել, թէ իբր, ընդհակառակը, ինքն ամեն միջոց գործ է դրել հաշտութիւն կայացնելու և նոյնիսկ վկայ կանչեց այդ մասին բժ. Թ. Զաքարեանին։

Բայց ես անցեալ անգամ առաջ բերի Աստրախանի պատգամաւոր Նիկ. Սաթունեանի վրդովմունքը և խօսքերը, ասված Յուսիկ վ. ընակարանում, մեր ֆրակցիայի անդամների ներկայութեամբ թէ. «այնպիսի տգեղ դեր, որպիսին կատարեց Ս. Ցարութիւնեանը այս գործում, երկդիմի և երկերեսանի դեր, ոչ ոք չը կատարեց»։

Եղան և ուրիշ անձինք, օրինակ Այ. Խատիսեան, Տ. Յովհաննիսեան, որոնք կարող էին և հնարաւորութիւն ունէին գլուխ բերել այդ հաշտութիւնը, բայց առանձին գլուխ չը կոտրեցին, այլ բաւականացան պալիատիվներով և, վերջի վերջոյ, իրանց համակրութեամբ մեծամասնութեան գործելակերպին թև և թիկունք տուին մեծամասնութեան, որի կատարած անարդարութիւնը հիմնված էր միայն ոյժի, այն է՝ ձայների քանակի վրա թիւրքահայ պատգամաւորները մտածում էին, թէ «քանի որ մեզ հետ են Թիֆլիսի քաղաքագլուխը, Կ. Հ. Բ. Ընկերութեան նախագահը, հայոց Դրամատիկական Ընկերութեան նախագահը, ուրեմն մեզ հետ է Թիֆլիսի հայ հասարակութիւնը»։ Մինչ ակնյայտ իրողութիւն է, որ թէ Սամսոն Ցարութիւնեան, թէ Ալ. Խատիսեան և թէ Տ. Յովհաննիսեան էջմիածին էին ընկել ոչ իբրև նախագահներ կամ իբրև քաղաքագլուխ, այլ պարզապէս՝ իբրև յանձնարարված էջմիածնից պատգամաւորացուներ այս և այն թիւրքահայ թեմի, հետևաբար՝ որևէ առնչութիւն նրանք Թիֆլիսի հայ հասարակութեան հետ ունենալ չէին կարող։

Բայց այնու ամենայնիւ թէ Ալ. Խատիսեան, թէ Տ. Յովհաննիսեան որոշ չափով հաշտարար դիրք էին բռնել։

Այլ էին Ս. Ցարութիւնեան և վերոյիշեալ երեք խուժանապետները։ Վերջին երեքը անձնապէս շահագրգռված լինելով միայն Օրմանեանը տապալելու խնդրի մէջ՝ ամենևին ի նկատի չունէին որևէ գաղափարական գործ. թէկուզ հայոց ազգը և եկեղեցին կործանվէին, այդ ոչ Վ. Փափազեանի հոգն էր, ոչ Մինրդատի, ոչ Ե. Տէր-Անդրէասեանի։

Ս. Ցարութիւնեան, իբրև հեղինակութիւն վայելող հակաօրմանեանական և «հօրիզոնական-խլուրդային» պատգամաւորների, ինչպէս և Էջմիածնի միաբանների որոշ մասի շրջանում, կարող էր մեղմացնել յարաբերութիւնները, հաշտութեան եզրեր որոնել, մօտեցնել իրար և թոյլ չը տալ, որ հակաօրմանեականները հէնց սկզբից անհաշտ և անզիջող դիրք բռնէին դէպի իրանց հակառակորդները, մինչև այն աստիճան, որ նոյնիսկ քաղաքավարական կանոնները զանցառութեան էին տրվում, և թիւրքահայ պատգամաւորները մի այցելութիւն անգամ զլանում էին այն միաբաններին, որոնք Օրմանեանի կողմնակից էին։ Եւ, վերջապէս, նա, իբրև մասնաւոր ընդհանուր ժողովների ատենապետ, իր կօրրէկտութեամբ, անաչառութեամբ կարող էր շատ բան հարթել։

Ս. Ցարութիւնեան ինքն հակաօրմանեական էր. այդտեղ ոչ մի վատ բան չը կար. բայց իբրև ժողովի նախագահ՝ նա բարոյապէս և իրաւագիտապէս պարտաւոր էր անաչառ և անկողմնակալ լինել, մինչ նա նոյնպէս, նախագահի պաշտօնում, վարվում էր իբրև մինը թունդ հակաօրմանեականներից։ Բերեմ օրինակներ։

Ամենքին յայտնի է, որ ամբողջ ամիսների ընթացքում հայ լրագիրների մէջ տեղեկութիւններ և մերկացումներ էին տրվում պատգամաւորների ընտրութեան գործում կատարված զեղծումների, ապօրէն և անվայել միջամտութիւնների, ճնշումների մասին, «հօրիզոնական-խլուրդային» ցուցակի մասին։ Եւ ահա էջմիածնում, ուր [illegible] ծը, հնարաւորութիւն կար քննել, ստուգել այդ ամենը, համոզվելու համար թէ որքան իրաւացի կամ անիրաւացի էին մեղադրանքները։ Նոյնիսկ իբրև Ս. Ցարութիւնեանի համար, եթէ նա շահագրգռված չէր այդ մերկացումների մէջ, ցանկալի պէտք է լինէր իմանալ իսկութիւնը։ Բայց Ս. Ցարութիւնեան, ամեն կերպ աշխատում էր, որ այդ մերկացումները երևան չը գան, չը ճշդվեն. և ահա այդ նպատակին հասնելու համար, նա գործ էր դնում իր նախագահական և ճարպիկ լարախաղացութեան բոլոր ոյժը։

Պատգամաւորներից մինը՝ երդ.-հաւ. Եղիբարեան, քննելով ընտրական գործը, եկել էր այն համոզման, որ շատ զեղծումներ, ապօրինութիւններ են կատարվել։ Եւ ահա այն ժողովում, որ գումարված էր լիազօրութիւնները քննելու, նա վեր է կենում և յայտնում. «Պ. նախագահ, քննելով ընտրական գործը, ես տեսայ, որ շատ զեղծումներ են կատարվել, շատ պատգամաւորների ընտրութիւնը ապօրէն է և պէտք է բեկվի. ուստի ես յարուցանում եմ ընդհանուր հարց. կամենում է ժողովը զբաղվել այդ ապօրինութիւնների և զեղծումների քննութեամբ թէ ոչ. եթէ այո, այն ժամանակ ես կօնկրէտ փաստերն ևս կը ներկայացնեմ գործի քննութեան ժամանակ»։

Նախագահ Ս. Ցարութիւնեան ըմբռնում է, որ այդ առաջարկի ընդունելութիւնը կարող է վատ հետևանքներ ունենալ, ուստի և խնդիրը արմատից է կտրում։

— Կամենում է ժողովը ընդունել Եղիբարեանի առաջարկը թէ մերժել։

— Մերժել, մերժել, ի հարկէ,—գոռում են ամեն կողմից հակաօրմանեականները։

Եւ նախագահը յայտարարում է.

— Ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշեց մերժել։ Ուրեմն, ժողովը վաւերացնում է կատարված ընտրութիւնները։

— Այո, այո,—որոշում է մեծամասնութիւնը։

Եւ նախագահը յայտարարում է.

— Ընտրութիւնները և լիազօրութիւնները ճանաչված են օրինաւոր և վաւերացված։

Եւ սակայն այնտեղ, նախագահի առջև, դրված է ընտրական գործի ստուար հատորը, որ պարունակում է այնպիսի տեղեկութիւններ, որոնք վերջին տգէտին անգամ կը համոզէին, թէ լիազօրութիւնները, ընտրութիւնները շատ և շատ հեռու են օրինաւոր լինելուց։

Վեր է կենում օպոզիցիայի մի այլ պատգամաւոր և յայտնում.

— Գոգչի հայ Հայ Ս. Գրիգորյան Ս. Գրիգորյան Ս. Գրիգորյան

աշխատեցի խանգարել, որ նրանք չը հասնեն իրանց նպատակին...

Խաչատրեանը, ականատես այս ամենին, թողց դպրոցը և հեռացաւ։ Մեր ուշ-պատանաչ հոգաբարձութեան անդամներից մի քանիսը ուզում էին նրան այդպիսի մի միջոցով վտարել ոչ թէ նրա համար, որ իսկապէս նա մի վատագաւոր քաղաքացի էր, այլ այդտեղ անձնական հաշիւներն էին դերակատարները։

Միւս ուսուցչին, Սարգսեանին, ճիշդ է, ուղղակի չը հեռացրին և նոյնիսկ նրան (ինչպէս յետոյ էլ ինձ) իր պաշտօնի մէջ մնալու էլ հրաւիրագիր ուղարկեցին, բայց դրել էին այն տեսակ մի դրութեան մէջ, որ նա էլ չէր կարող Եպտա մնալ։ Նոյնիսկ տարվայ մէջ մի քանի անգամ էլ հրաժարական պատրաստեց տալ, բայց զլխելով մեր խնդրին՝ չը յանձնեց պէտք եղած տեղը։ Վերջացաւ ուսումնական տարին և հեռացաւ։

Հոգաբարձուները վայելուչ դիրք չը բռնեցին նաև երրորդ ուսուցչի՝ ինձ հանդէպ։ Բայց դրա մասին լռում եմ, որպէսզի իմ անձովս զբաղեցրած չը լինեմ ընթերցողին։

Այստեղ աւելորդ չեմ համարում նաև ասել մի երկու խօսք աղօթատան մասին, ուր երկու տարուց աւելի ծառայել եմ։ Տարեկան մուտք ունի մօտ 1300 ր., ելք՝ ոչ աւելի քան 900 ր.։ Զը գիտենք թէ ուր է անհետանում մնացեալ 400 ր.։ Սրանից 3 տարի առաջ երեցփոխ կարգվեց Նիկ. Ստեփանեանը և մինչև հիմա էլ մնում է իր պաշտօնում։ Մինչև հիմա տեղի չէ ունեցել մի հրապարակային հաշուետուութիւն աղօթատան եկեղեցուի մասին, որտեղ նուիրատուները գոնէ իմանային, թէ ի՛նչ կերպով են ծախսվում իրանց նուիրած դրամները։ Ուրիշ հայաբնակ վայրերում, սակայն, սովորական է գոնէ տարին մի անգամ այդպիսի զեկուցում տալը։ Զը նայած ժողովրդի բողոքներին և տրտունջներին ու թեմ. առաջնորդարան տեղացող թղթերին, երեցփոխը խուսափում է հաշիւ կամ բացատրութիւն տալուց և շարունակում է իր ընթացքը։

Ժողովուրդը, մասնաւորապէս նուիրատուները, ականատես լինելով այդ մի շարք զեղծումներին՝ սառել են ուղղակի և վճռել են այսուհետև ոչ մի կօպեկ չը նուիրել աղօթատանը, մինչև որ ապաբէպից չը հեռացվեն նրա ներկայ զեկավարները, ի թիւս որոց և տեղիս ծխատէր ը.սհանան, որի մասին իր ժամանակին գրաւոր բողոք է ուղարկված ժողովրդի կողմից Էջմիածին տեղակալ սրբազանին, որպիսի բողոքի հետևանքը դեռ յայտնի չէ։

Կիւրեղ սարկ. Աբգարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Բժշկապետ Ց. Գասպարեանը, որ ամեն տարի ուղարկում է մեզ 10 օրինակ «Մշակի» գլինը՝ ձրիաբար ուղարկելու «Մշակը» զանազան հիմնարկութիւնների, և առաջիկայ 1912 թուականի համար ևս ուղարկել էր 100 բուրլին, այժմ նորից ուղարկել է մեզ 100 բուրլի, որպէս զի 10 օրինակ «Մշակ» դարձեալ ուղարկենք ձրիաբար զանազան հաստատութիւնների ի յիշատակ «Մշակի» 40-ամեայ գոյութեան յոբելեանի։ Ուրեմն բժշկապետ Ց. Գասպարեանի հաշուով 1912 թ. «Մշակ» կուղարկենք ձրիաբար՝ 20 օրինակ՝ զանազան հաստատութիւններ։

✦ Երէկ տեղի ունեցաւ քաղաքիս նորընտիր ձայնաւորների երդման արարողութիւնը։ Երդումից յետոյ իրաւասուները մասնաւոր խորհրդակցութիւն ունեցան։

✦ Քաղաքային նորընտիր իրաւասուների նիստը տեղի կունենայ այսօր երեկոյեան ժամը 8-ին։

✦ Քաղաքային վարչութեան դիւանատունը նոր իրաւասուներին ուղարկեց մի շարք նոր զեկուցումներ և նիւթեր, որպէսզի այդպիսով նրանց հնարաւորութիւն տրվի ժամանակին ծանօթանալ քաղաքային գլխաւոր գործերի հետ։

✦ Այսօր, դեկտեմբերի 29-ին, Պետերբուրգի Գիտութեանց ճեմարանում կը կայանայ տարեկան հանդիսաւոր նիստ, որը կը կարդացվի համառօտ հաշիւը ճեմարանի մի տարվայ (1911 թ.) գործունէութեան։ Հաշուի ընթերցումից յետոյ ակադեմիկոս Ն. Մարրը կարդասանէ մի ճառ հետաքրքիր թեմայով. «Կովկասը և հոգեոր կուլտուրայի յուշարձանները»։

✦ Ինչպէս մեզ տեղեկացնում են, Պետական Դումայի անդամ Բօգդէչէվը, որ ներկայումս ճանապարհված է Քութայիս-Բաթում դասախօսութիւններ կարդալու, վերադառնալով Թիֆլիս, նախ քան Ռուսաստան մեկնելը, այստեղ մօտ օրերում կարդալու է իր վերջին և երրորդ դասախօսութիւնը Վրաց թատրոնում։

✦ Այսօր Արտիստական թատրոնում տեղի կունենայ երկրորդ անգամ գրական դասավարութիւն Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ» վերջին աշխատութեան հերոսի վրա։ Եկամուտը կը յատկացվի 2-րդ իգական գիմնազիայի ծնողական շրջանի եկամուտների օգտին։

✦ Եալու գետի վրայի վերցրած կօնցեսիաներով յայտնի բիզօբրազօվը հնարել է մի նոր տեսակի թնդանօթ, որը գործում է ճնշած օդի օգնութեամբ և որը ինքնաբերաբար դուրս է նետում ռումբերի անհամար քանակ։ Այս նոր գիւտը յեղաշրջում կառաջացնէ արտիլերիական գործում։

✦ Վիէննայի պրօֆ. Նիմֆուերը հնարել է մի նոր օժանդակ գործիք, որը աէրոպլանների շուռ գալը և վայր ընկնելը անհնարին է դարձնում և որի շնորհիւ հնարաւոր է դառնում թռիչքներ կատարել նոյն իսկ ամենախիստ քամիների ժամանակ։

✦ Առաջիկայ տարվայ յունվարի 22-ին Թիֆլիսում կը տօնվի հայազգի դերասանուհի Մ. Սաֆարօվա-Աբաշիձէի յօբելեանը՝ նրա վրաց բեմի վրա ունեցած գործունէութեան 32-ամեակի լրացման առիթով։

✦ Կովկասեան զինուորական շրջանի շտաբի գլխաւոր գեն.-լեյտ. Դ. Բերիմանը Թիֆլիսից մեկնեց արձակուրդով։

✦ «Մեղու» ընկերութեան վարչութիւնը իշխ. Մ. Թումանեանի միջոցով ստացել է 100 ր. Կովկասի Փոխարքայ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովից, Ծննդեան տօներին գործադրելու յիշեալ ընկերութեան կարիքների վրա։

✦ Ցարսկօէ-Սէլօյում վերջերս վախճանվել է Քութայիսի նախկին նահանգապետ գաղտնի խորհրդական Մալաֆէէվը։

✦ Դեկտեմբերի 26-ին Թիֆլիսի գծագրութեան և նկարչութեան դասընթացքներում բացվեց պատկերահանդէս, որը գաղտնվում է Ելիզավետինսկայա փողոցի № 79 տանը։ Ցուցահանդէսը բաց կը լինի մինչև յունվարի 5-ը։

✦ Դեկտ. 27-ի երեկոյեան, Կայսերական Բժշկական Ընկ. տանը կին-բժիշկ Ա. Ի. Շինգարեվան պարզ, ամենքին հասկանալի լեզուով կարդաց մի դասախօսութիւն մալիարիայի կամ դողերոցքի մասին։ Դասախօսի առաջ բերած թէորիից երևաց, որ ոչ մի հիւանդութիւնից մարդկութիւնն այնքան մեծ չափով չէ տուժում, որքան մալիարիայից։ Միայն Կովկասը բժշկական statistիկայի հաշուով 800,000-ից աւելի հիւանդ է ունենում դողերոցքից։ Չը հաշուելով այն հարիւրաւոր հիւանդներին, որոնք գուրկ լինելով բժիշկներից՝ չեն մտնում և նրանց տեղեկագրերի մէջ։ Ցոյց տրվող եկաբերի և մանրամասն բացատրութիւնների միջոցով դասախօսը ծանօթացրեց հանդիսականներին ինչպէս մալիարիան մարդկանց մէջ տարածող մոծակներին, նոյնպէս և նրանց դէմ մաքառելու և հիւանդութիւնից բժշկվելու միջոցների հետ։ Նման դասախօսութիւններ իւրաքանչիւր կիրակի երեկոները ձրիաբար կարդացվում են նոյն տեղը հասակաւորների համար։

✦ Այսօր Թիֆլիսի Ժողովարանում կայանալու է «Թատերական-Գրական-Երաժշտական» երեկոյթ յօգուտ Կովկասի Հայ Դպրոցների Ուսուցիչների և Վարժուհիների Միութեան։ Ի նկատի ունենալով Միութեան կուլտուրական նպատակները, ի սրտէ ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

✦ Ստացանք Վլադիվոստոկից Խ. Մ. Գրիգորեանից 10 ր., յանձնելու հանգ. Պ. Սիմէօնեանի յուշարձանի համար կազմված յանձնաժողովին։ Ցիշեալ գումարը յանձնեցինք ըստ պատկանելոյն։

✦ Այսօր Վրաց թատրոնում դերասան Վ. Գունիայի բենեֆիսին առաջին անգամ վրաց բեմի վրա կը ներկայացվի «Ցուլիոս Կայսր» Վ. Շէքսպիրի հռչակաւոր ողբերգութիւնը։ Ներկայացումից յետոյ տեղի կունենայ համերգ-դիվերտիսմէնտ։

✦ Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Հայուհեաց Որբախնամ Ընկ. օգտին Արտիստական թատրոնում նոյեմբ. 28-ին տրված ներկայացմանը ստացված է մուտքի տոմսերից, նուէրներից և կօնֆետի վաճառումից 1016 ր. 60 կ., ծախսված է 653 ր. 77 կ., մնում է զուտ արդիւնք 362 ր. 83 կ.։ Նուէրներ ստացված են հետեւեալ անձերից. Խ. Աֆրիկեանից և տ. Ռ. Շահպարոնեանից 5-ական ր., Ա. Բաղդասարեանից, Վ. Կարգանեանից, Ա. Աւագեանից, Սուզանաճեանից 3-ական ր., Ե. Ծատուրեանից, Ի. Մանթաշեանից, Լ. Մանթաշեանից, Ե. Փուլդինեանից, Ա. Մելիքեանից, Ա. Միլօվից, Վ. Սրբէլիից 2-ական ր., Ց. Խունունցից, Ա. Սուրէնեանից, Պ. Աբգարեանից, Կ. Գուրգէնօվից 1-ական ր. և մանր 2 ր. 75 կ.։ Վարչութիւնը յայտնում է շնորհակալութիւն այն բոլոր անձանց, որոնք նպաստեցին ներկայացման աջողութեանը»։

✦ Դեկտ. 25-ին, ցերեկ. ժամը 12½-ին, Թիֆլիսեցի Սարիբէկ Սարգսեանը ինքնասպանութեան նպատակով կարբոլեան թթուս ընդունեց։ Նոյն հեղուկի միջոցով ինքնասպանութեան փորձ փորձեց Ալ. Քարտաշեանը։ Երկուսի կեանքն էլ վտանգից զերծ է, շնորհիւ շուտափոյթ օգնութեան։

✦ Պետերբուրգին մօտիկ կայարաններից մէկի վրա ձերբակալված են երկու անյայտ անձինք, որոնք իրանց անուանելս են եղել իշխան և իշխանուհի Օրբէլիանի։ Քննութիւնը պարզեց, որ նրանցից մէկը կօշակ կաղօրարին է, իսկ միւսը գեղջկուհի Նիկիտինան։ Սրանցից առաջինը մի շարք շանտաժներ է կատարել։

✦ Դեկտեմբերի 26-ին Վրաց թատրոնում վրացերէն լեզուով ներկայացվեց «Սեվիլեան սափրիչ» օպերան, մասնակցութեամբ օպերային երգիչ Վասօ Սարաջիշվիլիի։ Երաժշտախումբը կառավարում է Վրաց Դրամ. Ընկ. վարչ. նախագահ Ն. Քարթվելիշվիլին։

✦ Քութայիսի Վրաց Դրամ. Ընկ. վարչութիւնը վրաց յայտնի բարեգործ Դաւիթ Սարաջիվի այրին շնորհակալութեան գիր ուղարկեց, նրա արած վերջին առատ նուիրաբերութեան համար։

✦ «Մշակի» № 286-ում զետեղված Ami-ի յօդուածում, որ վերաբերում էր հայ-կաթոլիկներին, մոռացմամբ բաց է թողնված, որ Ե. Խանդանեանի՝ հայ-կաթոլիկների համար առանձին օրգան հիմնելու առաջարկը վերաբերելիս է եղել հայ-կաթոլիկների առաջնորդարանի կողմից առանձին պաշտօնական օրգան հիմնելու մտադրութեանը, ինչպէս այդ վերջումը պարզեց Ա. Սարուխան։

ՄԱՄՈՒԼ

Մեր բժիշկ-գործիչների մէջ անխոնջ է բժշկապետ Ա. Բուդուղեանը։ Նա իր մասնագիտական պարապմունքից դուրս ժամանակ է գտնում զրաղվել և զրական-հասարակական-սոցիալական, ինչպէս և գործնական-գիւղատնտեսական հարցերով։

«Գիւղատնտեսի» վերջին համարում (№ 41) նա մի յօդուած է զետեղել գիւղատնտեսական կուրսերի մասին, որի մէջ ցոյց է տալիս, թէ ինչ ահագին օգուտներ կարող են բերել մեր ժողովրդին գիւղատնտեսական կուրսերը։

Նրանք մեր կեանքի մէջ մեծ նշանակութիւն պէտք է ունենան, և իրօք որ այդպէս պէտք է լինի, որովհետև նրանք կը սովորեցնեն սերել զեմատվոյի և կօօպերացիայի գաղափարները, որ դժբաղդաբար մեզանում դեռ չեն իրականացել։

Զեմատվոյի և կօօպերացիայի գաղափարները զառաջնացնեն և կը վերակենդանացնեն մեր ժողովուրդը, նրա մէջ առաջ բերելով դէպի մարդկութիւնը մի առանձին սէր, որովհետև այդ երկու մեծ գործունները իրանց մէջ պարունակում են համայնական աշխատանքի գաղափար, որ իրօք պէտք է տանեն դէպի գիտակցական ազատութիւն և արդարութիւն։

Գիւղատնտես վարժապետը մի ցանկալի հիւր է, որ բացի իր ուղղակի պարտաւորութիւնները կատարելուց կարող է և իր գործունէութեան տեղում գիւղատնտեսական ընկերութեան բաժանմունքներ հիմնել, որոնք մեծ բարոյական և նիւթական օժանդակութիւն կարող են տալու իրանց գործունէութիւնն ընդարձակելով։ Հասկանալի է, որ առանց օժանդակութեան և կանոնաւոր գործունէութեան ոչ մի գործ չէ կարող օգտակար և տևական լինել. պէտք է կազմակերպել։

Գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ մեր աղքատիկ զրականութիւնը այդ դասընթացների շնորհիւ կը բարելաւի մեր գիւղացրութեան գիւղատնտեսական տեսնիկան, առաջ կը գան գործելու պատրաստ մարդիկ և խօսքն ու գործը առաջ կերթան ձեռք ձեռքի տուած։ Արտադրողական կրթութեան համար կը կազմակերպվեն պարբերական դասախօսութիւններ ու զրոյցներ՝ կապված գործնական պարապմունքների հետ. բացի այդ, կը մտցվին քաղաքի ազատ մնացած հողերը և կը պարզվի նրանց նշանակութիւնը տնտեսական տեսակէտից, որ կարող է մեծ արդիւնաբերական նշանակութիւն ունենալ։

Ապա յօդուածագիրն ողջունում է «Գիւղատնտեսի» որոշումը՝ 1912 թուականից հրատարակել «Առողջապահի» անունով մի երկշաբաթաթերթ։ Ինչպէս յայտնի է այդ անունով թերթ նաև կոյութիւն ունի վաղուց «Տարազ» հանդէսին կից։

*

«Հօրիզոն» թերթը շարունակում է չքմեղ ձևանալ կաթոլիկոսական ընտրութիւնների մէջ հօրիզոնականների կատարած տխուր դերի մասին և աշխատում է մոլորեցնել հասարակութիւնը ու ցոյց տալ, թէ Օրմանեանի կանդիդատութեան կողմնակիցները բռնած ունեն զեմօկրատական-պրօգրէսիստական դրօշակ։ Թերթը մի բօպէ չէ մտածում, թէ հայ հասարակութիւնը այժմ այնքան զարգացած է, որ շատ լաւ զիտէ ինչ գին և արժէք տալ այդպիսի առասպելներին. հետևաբար նրա այդ դիտաւորեալ խեղաթիւրումները չեն կարող որևէ ազդեցութիւն գործել։ Եթէ հայ հասարակութիւնը նոյն իսկ անծանօթ լինէր Սուրէնեան արքեպիսկոպոսի անցեալ գործունէութեան, որի մէջ զեմօկրատական ոգու ոչ մի նշոյլ չէ նկատվել, ինչպէս և ոչ մի գործ, բայց հասարակութիւնը լաւ գիտէ, որ եկեղեցու մէջ զեմօկրատական կամ առաջադիմական զաղափարներ, սկզբունքներ և բէֆորմա մտցնելու համար ամենից առաջ հարկաւոր է համապատասխան կրթութիւն, հասկացողութիւն զեմօկրատական ուսման, լուրջ ծանօթութիւն այն սկզբունքների, գաղափարների հետ, որոնց ամբողջութիւնը կազմում է զեմօկրատիզմ կոչված ուսումը։ Այդ տեսակէտով ամբողջ հայ հոգևորականութեան մէջ միայն Օրմանեանն է պատրաստված գիտնականապէս՝ այդպիսի գաղափարներ ըմբռնելու և իրագործելու համար։

Միամիտ ընթերցողներին շլացնելու համար, «Հօրիզոնը» իբրև փաստ իր ասածների յիշում է ռուսաց գաղէտական օրգան «ԲէՀԵ» լրագրի մի յօդուածը, որի մէջ Օրմանեանի կողմնակիցները կոչված են կղերական-պահպանողական, իսկ Սուրէնեանի կողմնակիցները զեմօկրատ-պրօգրէսիստ։ Բայց գաղտնիքը շատ հեշտ է բանալ։ «ԲէՀԵ» լրագիրը չունէր էջմիածնում սեփական թղթակից, այլ նրան թղթակցելու պաշտօնը ձեռք էր բերել մի հօրիզոնական, որ և գրել է այդ յօդուածը, օգտվելով այն հանգամանքից, որ ռուս թերթը ծանօթ չէ էջմիածնի գործերին և կաթողիկոսական հարցին։ Ի հարկէ, երբ «ԲէՀԵ» թերթին բացատրվի գործի էութիւնը, նա ոչ մի բօպէ չի վարանի յայտնել, որ իրան մոլորեցրել են։ Այլ բան կը լինէր, ի հարկէ, եթէ «ԲէՀԵ» թերթի խմբագիրներից մէնը այդպիսի կարծիք յայտնէր և ոչ մի հօրիզոնական հայ թղթակից, որ յատկապէս ձեռք է բերել թղթակցի պաշտօնը լեռնի մտքով։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Վարշավայի հայկական գաղութը միաձայն բողոքում է պատգամաւորների ապօրէն մեծամասնութեան գործողութիւնների անարժան եղանակի դէմ ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնների ժամանակ էջմիածնում։ Այդ մեծամասնութիւնը, անձնական հաշիւներով, ապօրէն միջոցներով խլեցից արդարութեան ձայնը։ Գաղութի համակրութիւնը նրանց կողմն է, որոնք հրաժարվեցին մասնակցելու ընտրութիւններին, մնալով հաւատարիմ իրանց խղճին և սուրբ պարտականութեան։

40 ստորագրութիւն

—

Թիֆլիս, 28 դեկտեմբերի

Սիրելի «Մշակ» լրագիր.

Քո գրած № 286-ը կարդացինք։ Ափսոս որ չէիր գրել, թէ որտեղ են խեղճ երեխաները։

Մեր սիրելի հայրիկին խնդրեցինք մեզ համար չառնել ընծաներ, այլ տալ մեզ դրանց փողը։

Ահա քեզ ենք ուղարկում 3 բուբլի։ Շուտով տուէք նրանց։ Զէ որ մեզը են նրանք։

Մենք ուրիշ ըսկերներ էլ ունենք. եթէ նրանք էլ իրանց հայրիկներից փող ստանան, դուք կը յանձնէք խեղճ երեխաներին։

Լեոն, Սնիկ, Մարգօ Մաղաքեանները

—

Թիֆլիս, 24 դեկտեմբերի

Դեկտեմբերի 12-ին Հայոց Դրամատիկ. Ընկ. դերասական խումբը, Արտիստական թատրօնում, ներկայացրեց մի նոր պիէս՝ «Պատրանք» վերնագրով։

Այդ ներկայացման առիթով, «Մշակ» № 283-ում, պիէսը քննադատող յարգելի յօդուածագիրը գտնում է նրան չափազանց թոյլ, հետևանք բանաստեղծութեան, պաս վիլային բնաւորութիւն ունեցող և այլն և այլն։ Եւ ահա, չը գիտեմ ինչու, շտապում է մի շարք անթոյլատրելի ածականներ, հայհոյանքներ ուղղել իմ հասցէին։

Ինձ համար մինչև այժմ էլ միանգամայն անբացատրելի են մնացել այն պատճառները, որոնց շնորհիւ ես ենթարկվում եմ այդ յարձակումներին։ Պիէսը թոյլ է, ուժեղ է, դեղարուեստական է, թէ անպէտքութիւն է, այդ արդէն անաչառ կրիտիկայի գործն է։ Իսկ պիէսների ճիշդ կրիտիկա կարող է լինել միմիայն ներկայացումից յետոյ, որից և շատ յաճախ կախված է լինում նրա՝ բեմի վրա մնալը։ այս շատ պարզ է կարծեմ։ Իսկ բեմիսսեօրի գործն է ամենայն երկիւղածութեամբ մօտենալ պիէսներին և, ըստ չափու իր ստեղծագործական կարողութեան, ճշգրիտ ներկայացնել այն, ինչ տալիս է պիէսը։ Բացառիկ պատասխանատուութեան է ենթարկվում մանաւանդ առաջին անգամ բեմ հանվող պիէսների բեմիսսեօրը, որովհետև, շատ յաճախ, առաջին ներկայացումն է, որ որոշում է պիէսի գոյութեան իրաւունքը։

«Պատրանք» պիէսը դրվեց առաջին անգամ։ Արինք՝ ինչ կարող և պարտաւոր էինք անելու։

Եւ դրա համար չեմ կարծում, թէ մենք արժանի լինէինք այն յարձակումներին, որոնց ենթարկվեցինք։ Իսկ եթէ մեզ դատապարտում են, թէ ինչու ընտրել և մեզ թոյլ ենք տուել բեմ հանելու մի պիէս, որ, իբր թէ, պասկվիլային բնաւորութիւն է կրում, դրան էլ պիտի պատասխանենք, որ մինչև այժմ էլ չենք կարողանում հասկանալ, թէ յարգելի քննադատներն ինչի մէջ են տեսնում պասկվիլ, ինչ մի պասկվիլային բան են գտնում պիէսի մէջ, ուրտեղ, ինչումն է պասկվիլը։

Մի՞թէ նրանում, որ հեղինակը իր պիէսում դուրս է բերել մի բացասական խմբագիր տիպ։ Տէր Աստուած. մի՞թէ իրօք այդ աստիճան վիրավորեցրիչ և անարգող է մի խմբագիր բացասական տիպ դուրս բերելը. և մի՞թէ իրօք գոյութիւն չունեն բացասական տիպի խմբագիրներ, բանաստեղծներ, դերասաններ, վիպասաններ։ Ինձ թւում է, որ գոյութիւն ունեն. և ինչ մի զայրացուցիչ բան կայ այդտեղ, չեմ հասկանում։ Ես համաձայն եմ, որ խմբագրի տիպը պիէսում անաչառ է, մինչև անգամ, եթէ կուզէք, իսկ կարծիքով, աւելորդ է, ինչպէս և աւելորդ պիտի համարել Սօֆիի դերը պիէսում։ Բայց այդտեղ ինչոր պասկվիլ տեսնել անհիմն է։ Եւ այդ ով է, որ կարող է և կը համաձայնվեր ապացուցելու, թէ պիէսում դուրս բերված խմբագիրը գոյութիւն ունեցող խմբագիրներից սրա կամ նրա տիպն է։ Բաւական լաւ ծանօթ լինելով պիէսին պնդում եմ, որ ոչ մի պասկվիլային բան չը կայ նրանում։ Հակառակ դէպքում նա չէր կարող մտնել Դրամատիկական Ընկերութեան բեմերտուարի մէջ, և ոչ մի բան չէր կարող ինձ ստիպել կանգ առնելու այդ պիէսի վրա։ Կարելի է ասել, որ պիէսը յիշեցնում է Հաուպտմանի «Մի՞այնակները», Պշիբըշեվսկի «Երջանկութեան համար» և այլն, և այլն, ինչ ուզում էք կարող էք ասել, այդ ձեր՝ քննադատներիդ իրաւունքն է, բայց լաւ չը ծանօթացած պիէսին՝ համարել նրան պասկվիլ և դրա համար հայհոյել մի ամբողջ հիմնարկութիւն իր բեմիսսեօրով ու դերակատարներով միասին, այդ անելու իրաւունք չը պէտք է ունենար, ինձ թւում է, և ոչ մի անաչառ, լուրջ քննադատ։ Այլ կերպ կը կորչէր յարգանքը դէպի տպագրական խօսքը, և նա միանգամայն կը կորցնէր իր նշանակութիւնը։ Գ...

լով այն մեղադրանքին, որին ենթարկվում են խմբագրի դերը խաղացող դերասան Աւետեանը, որ իր զրիմով իբր թէ յիշեցրել է մեր խմբագիրներից մէկին, այդ ճիշդ չէ։ Նախ այդ միանգամայն հերքում եմ, իսկ եթէ ենթադրենք էլ, որ իրօք յիշեցրել է, այստեղ էլ մի դատապարտելի բան չը կայ։ Ահա թէ ինչու։

Միանգամայն ակամայ՝ Աւետեանը, բեմի վրա, իր արտաքինով կարող է յիշեցնել զոյութիւն ունեցող խմբագիրներից որևէ մէկին։ Այստեղ ոչ մի զարմանալու և դատապարտելու բան չը կայ։ Բաւական է, եթէ մեր խմբագիրների մէջ գտնվի մէկը, որը իր հասակով, ձայնով և քայլուածքով, թէկուզ շատ քիչ նման լինի Աւետեանին, ինքն էլ տարիքով մի մարդ, հարցը պարզ է։ Այլևս կասկած չը կայ, որ մի տարիքով, սպիտակ փոքրիկ միրուքով, խմբագրի դեր խաղացող Աւետեանը իր արտաքինով կարող է յիշեցնել զոյութիւն ունեցող խմբագիրներից որևէ մէկին։ Եւ բնական է, որ խմբագրին լաւ ճանաչող անձինք իսկոյն պէտք է յիշէին և պնդէին, որ Աւետեանը անչափ նման է իրան խմբագրին։ բայց երևակայեցէք, մի այլ մարդ, մի իրաւաբան, որ կարող էր այդ խմբագրին տեսած չը լինել, գուցէ մեծ նմանութիւն գտներ Աւետեանի և իր մէկ հին կլիենտի միջև։ Տէր Աստուած, ի՞նչ մի զարմանալու բան կայ այստեղ։ Մի՞թէ քիչ է պատահել ձեզ, որ բեմի վրա խաղացող դերասաններին իրանց գրիմովն նմանեցնէք ձեր այս կամ այն ծանօթին, ազգականին, պրօֆէսորին և այլն։ Դէհ, ճիշդ մի այդպիսի դէպք է եղել և այս անգամ, բայց դժբաղդաբար որովհետև տիպը բացասական է եղել, առաջ է բերել մի թիւրիմացութիւն, որը, յուսով եմ, պարզված պիտի համարել։ Վերջացնելով իմ պատասխանը, կրկնում և պնդում եմ, որ ոչ պիէսը, ոչ բեմիսսեօրը և ոչ էլ դերակատարը, չէին կարող և չեն ունեցել և ոչ մի միտում պակվիլ ներկայացնելու։ Ուրեմն և կարիք էլ չը կար պիէսին լաւ չը ծանօթացած՝ շանթեր տեղալ թէ Դրամատիկական Ընկերութեան վարչութեան, թէ բեմիսսեօրի և թէ դերակատարի հասցէին։

Սեւումեան

Ց. Գ.—Ինչ վերաբերում է մամուլի բաժնում «բարեկիրթ» և «էքսթէտիկայի» մասին արված բացագանչութիւններին, համաձայնում եմ անտեղի և թողնում եմ անպատասխան։ Սև.

—

Կ. Պոլիս, 10 դեկտ.

Ներկայիս պատիւ ունիմ ծանուցանել ձեր ազնուութեան որ առաջիկայ 1912 ապրիլ 1 կիրակի ցերեկ Պերայի Վարիյէթէ թատրոնին մէջ պիտի կատարուի վաղեմի տաղանդաւոր դերասանապետ Մ. Մնակեանի յիսնամեայ յոբելեանը, որ առաջին անգամ տեղի կունենայ հայ դերասանի մը համար։

Վստահ ենք, որ ձեր ազնուութիւնը պիտի փափաքի մասնակցիլ հայ արուեստի փառաւորումը ըլլալու կոչուած այս եզական հանդէսին և իր հուսկ քաջալերանքը չը պիտի զլանայ ծերունազարդ յոբելեարին, որ հայկական բեմին անդրանիկ դերասանը և անոր ամենէն անաղարտ փայլերէն մին եղած է։

Ի դիմաց կարգադիր մասնախմբի՝

Ներսէս Օհանեան

Ց.—Գ. Նամակ, հեռագիր և ուրիշ առաքում պէտք է ուղղել հետեւեալ հասցէին. Nerses Ohanian. Union de Paris, Constantinople.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՅԴ-ՋՕՐՋԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ «ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՁԱՐԻՔԻ» ՄԱՍԻՆ

—

Այս օրերս Կարդիֆում բացվեց կօնֆերէնցիա, նուիրված եկեղեցու վերաբերմունքի հարցին սօցիալական խնդիրներին։ Կօնֆերէնցիային մասնակցում են և անգլիական եկեղեցու անդամները և նոնկոնֆորմիստները, և նրա կազմակերպութեան ձեռներեցութիւնը պատկանում է Լլոյդ-Ջորջին։ Կօնֆերէնցիայի առաջին նիստում Լլոյդ-Ջորջը արտասանեց մի հետաքրքրական ճառ, որի մէջ բացատրեց եկեղեցու պարտաւորութիւնների մասին իր հասկացողութիւնը ներկայ հասարակութեան վերաբերմամբ։

Եկեղեցու պարտաւորութեան մէջ,—ասում էր Լլոյդ-Ջորջը,—ամենևին չէ մտնում այս կամ այն կուսակցութեան գործունէութեան պաշտպանութիւնը, ապիտացիա ի նպաստ այս կամ այն բարենորոգութեան։ Նրա պարտաւորութիւնը աւելի լայն է։ Նա պէտք է հոգ տանի այնպիսի հասարակական մթնոլորտ ստեղծելու մասին, որի գոյութեան ժամանակ պիտութիւնը կառավարող մարդիկ, որ կուսակցութեան էլ պատկանեն նրանք, զգային կատարեալ անկախութիւն անտես անել սօցիալական հարցը։ Մեր արտաքին քաղաքականութիւնը արտաքոյ կուսակցական է, որովհետև նա վերաբերում է հանրազգային պատիւին։ Սակայն մի՞թէ ազգայնութեան պատիւը չէ նսեմացնում որջերի և գիներների գոյութիւնը։ Հիւանդ և կիսաքաղց մանուկները, սակաւ վարձատրվող բանուորները նոյնքան ամօթաբեր են ազգային դրօշակի համար, որպէս և պարտութիւնը պատերազմի դաշտում։ Մեր երկիրը ամենահարուստն է աշխարհիս երեսին, և այնու ամենայնիւ միլիոնաւոր տղամարդիկ, կանայք և մանուկներ առանց որևէ մեղքի նրանց կողմից՝ ապրում են մեզ մօտ աղքատութեան, կարիքի և յուսահատութեան մէջ։ Մեզաւոր են դրա մէջ նրանց շրջապատողները։ Կուլ «սօցիալական չարիքի» դէմ բարեգործութեան դիմելու միջոցով բոլորովին անյուսալի գործ է։ Զէ որ բոլորը համաձայն են, որ չէ կարելի պաշպանել զօրքը և նաւատորմը կամաւոր հանգանակութեամբ։ Եթէ մեր ա...

միայն հայրենիքի զգացմունքին դիմելու ճարտարախօս կոչերից, մենք կունենայինք միայն նաւատորմ չինական ջօնկաներից։ Որպէս նաւատորմի պահպանութիւնը պէտք է ամբողջ հասարակութեան պարտաւորութիւնը լինի, նոյնպէս նա ունի միայն հնարաւորութիւն ոչնչացնել մուրացկանութիւնը։ Եկեղեցին պարտաւոր է ներշնչել ազգային խղճին նախ գոյութիւն ունեցող չարիքի գիտակցութիւնը, երկրորդ՝ պատասխանատուութեան զգացմունքը այդ չարիքի համար։ Առանց պատասխանատուութեան զգացմունքի, մինչև որ մարդիկ իրանց շահերը չուզենան զոհ բերել, ըէֆորմները անհնարին են։ Եկեղեցու պարտաւորութիւնն է,—աւարտեց Լլոյդ-Ջորջը,—մեր աչքերը բաց պահել, մինչև որ մարդկային թշուառութեան և վշտի պատկերը չը փոխարկվեն երջանկութեան և յոյսի պատկերով։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Թէհրանի կառավարութեան կողմից նշանակված այն մանամաժողովի մէջ, որը պիտի ընդունէր Նուստէրից բոլոր գործերը, անհամաձայնութիւններ են ծագել, որի պատճառով Նուստերի մեկնումը յապաղում է։

✦ Պարսկաստանի հարաւում անդրլիական զօրքերի հրամանատար է նշանակված գեներալ Իուզլասը։

✦ Երիտասարդ-թիւրքերը առաջիկայ ընարութիւնների օգտին են ուզում ծառայեցնել հօջաներից և սոֆթաներից կազմված «Մահմէդական ընկերութիւնը»։ Սակայն ընկերութիւնը մերժեց օգնութիւն ցոյց տալ երիտասարդ-թիւրքերին, որովհետև նրա անդամների մի խոշոր մասը հակված է ազատամիտների կողմը։

✦ Դեկտ. 23-ին թիւրքաց պարլամենտում սկսել են քննել սահմանադրութեան փոփոխութեան նախագիծը, որը ներկայացրել է կառավարութիւնը։ Վերաքննութեանը ներկայ չէ եղել մեծ վեզիրը։ Զեկուցանողի ճառի ժամանակ ընդդիմադիրները մեծ աղմուկ են բարձրացրել։

✦ Վերջերս դառնաշունչ ճմեռվայ բուք ու բորանի և ձիւնախառն սոսկալի քամիների շնորհիւ խոշոր վնասներ են հասել Կ. Պոլսին։ Այսպէս՝ Բոսֆորում կանգնած մի քանի նաւեր ջրասոյզ են եղել, հեռագրաթելերը կտրատվել են, գնացքների երթևեկութիւնը կանգ է առել որոշ տեղերում, իսկ փոթորիկների պատճառով անհնարին է դառնում երկաթուղու կառամբերի ժամանակին իրանց տեղերը ժամանումը։

✦ Սայիդ փաշան վիլայէթների իշխանութիւններին ուղարկել է մի հրահանգ, որով, յայտնելով որ ինքը ինքներորդ անգամն է, ինչ մեծ վեզիր է նշանակվել, խորհուրդ է տալիս նրանց խարութիւն չը դնել Թիւրքիան բաղկացնող ազգերի միջև։ Սայիդ փաշան, ի միջի այլոց, յայտնում է, որ մօտ ապագայում խաղաղութեան դաշն կը կնքվի Իտալիայի հետ՝ օսմանեան կայսրութեան համար պատուաւոր կերպով։

✦ Մակեդոնիայի մահմեդականութիւնը անդադար զինվում է ինքնապաշտպանութեան համար, քանի որ սպասվում են պաշտօնական անձանց ահաբեկումներ։ Նատերը նոյնիսկ հնարաւոր են համարում քաղաքացիական կռիւը։

✦ Մակեդոնիայի յեղափոխականների կոմիտէն, որ գտնվում է Սոֆիայում, որոշել է բաց թողնել մի թռուցիկ, որ ուղղված կը լինի բոլգար եղբայրներին, որով կը խնդրվի վերջիններից օգնութեան ձեռք կարկառել թիւրքաց բռնապետութիւնից ազատվելու համար։ Իսկ մի այլ թռուցիկ էլ ուղղված կը լինի եւրոպական պետութիւնների դալիճներին, որով կը խնդրվի վերջիններիս միջամտութիւնը Մակեդոնիայի դրութեան բարւոքման համար։

✦ Վերջերս իտալական կառավարութիւնը հռոմում ձերբակալեց «Վատիկանեան գործակալութեան» վերատեսչին և երկու թղթակիցներին, գրաւելով բոլոր փաստաթղթերը։ Ցիշեալ ընկերութիւնը գործելիս է եղել ի ՝ի պատ Իտալիայի աշխարհիկ կառավարութեան։ Գործակալութեան մեկենաս համարվում է Վատիկանի ամենակարող կարդինալ Մերրի-Դէլ-Վալը։ «Messagero» թերթի ասելով, գործակալութիւնը սուտ ու կեղծ տեղեկութիւններ է հաղորդելիս եղել այլ և այլ լրագրներին, որոնք բոլորն էլ ի ՝ի պատ Իտալիայի են եղել կազմված։

✦ Բերլինից հաղորդում են, որ տեղական լրագրների և բորսային շրջանների մէջ շատ է խօսվում Իտալիայի և Թիւրքիայի միջև մօտերս կայանալիք հաշտութեան մասին։ Հաշտութեան դէպքում Տրիպոլիսը պիտի անցնէ Իտալիային։ Պէտք է ճանաչվի Կիրէնայիկի վրա սուլթանի գերիշխանութիւնը։

✦ Չինաստանում սպասվում են յեղափոխական-հանրապետականների և կառավարութեան կողմնակիցների միջև նոր կռիւներ։ Պէկինում կրկին ապրատամբութեան են դիմել 200 զինուորներ, որոնց աջողվել է սակայն կալանաւորել։ Հանրապետականները յարձակվել են կայսերական զօրքերի վրա Խանի անի մօտ։

✦ Իւանշիկայը եւրոպական պետութիւնների միջամտութիւն առաջ բերելու նպատակով չինական գործերում գաղտնապէս կազմակերպում է աւազակախմբեր գլխաւորապէս տաժանակիր աշխատանքների դատապարտված յանցաւորներից։ Նա այդպիսով արհեստական կերպով ծնունդ է տալիս բօկսերական շարժման։

✦ Իւանշիկայը աջողեցրել է փոխառութիւն կնքել պետութիւններից մէկից։

✦ «Frank. Zeit.»-ին հեռագրում են Տօկիօյից, որ ամբողջ մամուլը հակագերմանական արշաւանք է սկսել, մեղադրելով Գերմանիային, որ սա պաշտպանում է չինական կառավարութիւնը։ Գերմանական օֆիցէրները ծառայելով կառավարական զօրքերի մէջ՝ օգնութիւն են ցոյց տալիս չինական միապետութեանը, ի վնաս հանրապետական շարժման։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
27 դեկտեմբերի

ԵՒՊԱՏՕՐԻԱ։ Անսովոր ուժեղ փոթորկի պատճառով չորրորդ օրն է նաւագնացութիւնը կանգ է առել։

ԹԷՈԴՈՍԻԱ։ Երրորդ օրն է անսովոր ծովային մրրիկ է։ Քամին նաւամատոյց է քշել տաս ստարազգի նաւեր։

ԵԱԼՏԱ։ Երկու օր քաղաքում տեղ հեղողը զգալի վնասներ հասցրեց։

Վնասները խոշոր են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեցին գործնական երկաթգնութեան համառուսական երկրորդ համագումարը և մատեմատիկոսների առաջին համառուսական համաժողովը։ Առաջինում նախագահում է ակադեմիկոս Կարպինսկին, իսկ երկրորդում—Պետական Խորհրդի անդամ պրոֆ. Վասիլիվը։

Պատահեռագրական գլխաւոր վարչութիւնը 1912 թ. յունվարի 2-ից փոքր համար սահմանում է Պետերբուրգի, Լիբավայի, Վարշավայի, Օդեսայի և Բաստովի (Դ.Լ.) միջև գիշերով նամակներ ու հեռագիրները փոխանակելու համար՝ նոր հեռագիր, իւրաքանչիւր խօսքին երկու կոպէկ։

Երեկոյեան ժամը 8-ին Բօրիսի և Գլէբի եկեղեցում գտնվեց դենապանի դիակը։ Կողոպտիչները տարել են երկու տոպրակ սև փող։

ԽԱՐԿՕՎ։ Քաղաքի վրայով անցաւ ձիւնախառն փոթորիկ։ Էլեքտրաքարշը և ձիաքարշը բոլորովին չեն գործում։ Շրջակայքում և գաւառներում քամին մնասներ է պատճառել։ Գնացքները ուշանում են։

ԵԱԼՏԱ։ Մի տան մէջ հեղեղից խեղդվեցին երկու մարդ։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Ունգարական կառավարութիւնը գրական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Ռուսաստանի պահանջը—աւելացնելու շաքարի արտահանութիւնը, և կարծում է թէ բրիւսելեան պայմանագիրը պահելու համար պէտք է լուծել ռուսական ներմուծման խնդիրը։

ՎԻԵՆՆԱ։ «Польское Слово»-ն հաղորդում է, որ լեհական կազմակերպութիւնների միութիւնը դիմեց չեխական կենտրոնական կոմիտէին մի նամակով, որի մէջ հրաժարվում է յարել ալաւնական դաշնակցութեան, որովհետև չեխերը հրաւիրված են մտնել նաև ռուս սօկոլների միութեան մէջ։

ՀՌՕՄ։ Ծովափնեայ քաղաքներից հաղորդում են ուժեղ փոթորկի մասին։ Վնասները տանեակ հազարներ են։ Հեռագիրը ու հեռախօսը չեն գործում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 12—1-ը։ (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—49

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԱՀՄԱՄԲ

Սաբուրթալոյում, եկեղեցու մօտ ծախվում է բաց դեռին 230 քառ. սաժ. տարածութեան։

Վելիամինովսկայա, տ. Խսրոյէվի № 9, Բալաշվիլիի կանանց արհեստանոցում։
(29,1) 1207. 2—1

ԵՂԲ. ՄԱՆԹԱՇԵԱՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

հրաւիրում է այն անձանց, որոնք կը ցանկան վերցնել իրանց վրա Գանձովսկայա փողոցի վրա տան շինութեան աշխատանքները։

Մանրամասն տեղեկութիւնները և պայմանները կարելի է ստանալ ամեն օր ժամը 12-ից մինչև 2-ը։ Աճուրդը լինելու է գրաւոր՝ փակ ծրարներով։ Վերջնական պայմանաժամը ծրարներ ներկայացնելու նշանակված է յունվարի 10-ին 1912 թ., առաւօտեան ժամը 12 ին։
(հ.ե.) 1202. 2—1

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԼՈՒՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ

„ՆՈՐ-ԽՕՍՔ“

Հասարակական, գրական եւ քաղաքական հանդէսի 3—4 №№-ները հետեւեալ բովանդակութեամբ

1) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ. — Ցակոբ Ցակոբեանի
2) ԳԻՒՂԱՑԻՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ (Աբովեան). — Ա. Կարինեանի
3) ՄՕՐԻՍ ՄԵՏԵՐԼԻՆԿ—Մի փոքր նրա խարէսիօնիստական փիլիսոփայութեան բնորոշման. — Գ. Պիճիկեանի
4) ԿՕԼԵԳԻՏԻՎԻԶՄԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ. — Ց. Կարախանեանի
5) ԿՐՕՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ. — Ֆիր-ի
6) ՔԱՂԱՔԻ ՄՕՏԻՎՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԱՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ. — Ա. Կարինեանի
7) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ա) Կաթողիկոսական հարց, բ) Բանւորների ապահովագրութեան օրէնսդրութիւնը, գ) Սովը Ռուսաստանում, դ) Բագուի նաւթարդիւնաբերող. համագումարը։
8) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ա) Իտալիա և Տրիպոլիս, բ) Ցեղափոխութիւնը Չինաստանում, գ) Պ. Լաֆարգ։
9) ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ա) «Կենդանի դիակ» Լ. Տոլստոյի, բ) Արցիբաշեւ „У послѣдней чертѣ“. գ) Ս. Իւզբաշի «Մօրաքրոջս զրոյցը», դ) Գ. Զոհրապի «Հայ պատգամաւորի մը հաշուետուութիւն»։

Ապահովագրած և հատարակ ծրարները, դրամը և թերթերը խնդրում ենք ուղարկել հետեւեալ հասցէով՝ Բաքու, Азіатская ул. № 110. Г. В. Пичикіану, «ՆՈՐ-ԽՕՍՔԻ» համար։
1204. 1—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/2. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատստեստատներ։
Գործնական զբաղմունքներ կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., կերմ., ֆրանս., ամերիկան., բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւարանութիւն համբիչի վրա. 7) Վաճառագրութիւն, արագագրութիւն (ամենամա ձեռքի ուղղումն), բ) ոչ-պարտադիր. 1) Osnar լեզուներ. 2) սղագրութիւն. 3) գրամեքանագրութիւն (բիմինգտոն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դասդասու։ Ունկնդիրների թիւ շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարերկրացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և արվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
(ա. օ.) 1193. 0—4

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
Կայսերական Երաժշտական Դպրոցն
ա ւ ա ր տ ա ծ
ՏԱԼԻՍ Է ԴԱՍԵՐ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՎՐԱ
Կարելի է տեսնել ամեն օր ցերեկ. ժամը 4—7-ը, իսկ կիրակի օրերը՝ առ. ժ. 9—12-ը։
Грибоѣдовская № 27, кв. 5.
(հ. կ.) 1122. 10—9

ԹԷՈԴՈՍԻԱՅԻ հայոց եկեղեցու համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
բարոյական և համեստ վարք ու բարքով, եկեղեցական արուեստին հմուտ և աջողակ
ձայնով
մի երիտասարդ ՍԱՐԿԱՒԱԴ
կամ նրան փոխարինող յարմարաւոր սպասաւոր։ Դիմաստելի են եկեղեցական խումբ պատրաստողները, երգի դասեր աւանդողները։ Պայմանների մասին դիմել՝ Եոդոսիա. Приходскому священнику А. Варданянцу.
(ա.օ.) 1194. 6—5

Դեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած,
№4711.
ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւնը, հաթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենարարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Գնորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք։
Ֆերդ. Միւլհենս պարֆիւմէրիա № 4711
Կ ԷՕԼՆ-ՐԻՆի վրա։ Ռիգա։ Հիմնված 1792 թ.։

(M. 341516/341546) 7—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1912 թ.
պատկերազարդ „ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“ 4-րդ տարի
որ լոյս է տեսնելու Թիֆլիսում շաբաթը մի անգամ
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ տարում ունենալու է աշխատակիցների ուժեղացված կազմ։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ի իւրաքանչիւր համարը լինելու է պատկերազարդված։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայոց մէջ միակ գիւղատնտեսական շաբաթաթերթն է։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ 1912 թուականին տալու է իր բոլոր ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ԲԱԺՆԵԳԻՆԸ ՏԱՐԻՆ 3 ՌՈՒԲԼԻ
ԲՈԼՈՐ ՁՈՒ ՀԱՏԷՐՆԵՐՈՎ Թանգագրամամբ
1) ՁԵՌՆԱՐԿ ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԵԱՆ՝ (ըստ Մօսկվիչի)
2) ԻՒՂԱՏՈՒ ԲՈՑՍԵՐԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄԵՐ, որոնք առաջին վաճառքում միասին կարժենան մի բուբլի։
—o—
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայ գիւղացութեան և գիւղատնտեսութեամբ պարապողների համար եղել է անցեալ երեք տարիներում միակ թերթը, որից ընթերցողները քաղել են գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերեալ գործնական խորհուրդներ և ցուցմունքներ։ «ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը աչքի առաջ ունի ոչ միայն Ռուսաստանում՝ Կովկասում և Անդրկովկասում ապրողների գիւղատնտեսական կարիքները, այլ և Թիւրքահայաստանի, Պարսկաստանի և Անդրկասպեան երկրի։
ԲԱԺՆԵԳԻՆԸ
Ռուսաստանում՝ տարեկան 3 ր., կէս տարին 2 ր.
Արտասահմանում՝ տարեկան 4 ր., կէս տարին 2 ր. 50 կ.
(հ. ջ. ե.) 1185. 5—4

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻՆ» կից, առաջիկայ 1912 թուականից, լոյս կը տեսնի
„ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ“
Հանրամատչելի պատկերազարդ երկշաբաթաթերթը։
«Առողջապահիկի» նպատակն է՝ առողջապահութեան պահպանումը և հիւանդութիւնների նախազգուշացումը մարդկանց և թէ գիւղատնտեսական կենդանիների վերաբերեալ։
«Առողջապահիկում» տեղ կը գտնեն՝ հասարակական և անձնական առողջապահութեանց վերաբերեալ հարցեր, նիւթեր և յօդուածներ, որպէս և տեղեկութիւններ՝ նորագոյն բուժական միջոցների մասին։
«Առողջապահիկը» կը տայ՝ գործնական ցուցմունքներ՝ յանկարծակի հիւանդութիւնների մասին մինչև բժշկական առաջին օգնութիւնը։
Իւրաքանչիւր համարում կը լինի «Հարց ու պատասխաններ» զուտ առողջապահական հարցերի մասին։
«Առողջապահիկը» ունենալու է՝ իր խմբագրական և աշխատակիցների կազմը մեր յայտնի բժիշկներից։
Թերթի խմբագրութիւնը յանձն է առել բժ. Ե. Մինասեան։
«Գիւղատնտեսի» տարեկան բաժանորդներին «Առողջապահիկ» ուղարկվում է տարեկան մի բուբլի յաւելուածով, այն է՝ փոխանակ երեք բուբլու՝ չորս բուբլով։
Նրանք, որոնք կը ցանկանան ստանալ միմիայն «Առողջապահիկ», առանց «Գիւղատնտեսի», վճարելու են տարեկան 2 ր. 50 կ.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“.
(հ.ջ.ե.) 1186. 5—4

ԲԱՑՎԱԾ Է 1912 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀՈՎԻՏ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՀՐԱՏԱՐԱԿՀ. VII ՏԱՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ { Տարեկան . . . 4 ր. —
կէս տարվան . . . 2 ր. 50 կ.
Ամսական . . . — 50 կ.
Արտասահման տարեկան՝ 12 ֆր., կէս տարվան՝ 7 ֆր.։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Խմբագրութեան հասցէն՝ Редакція армянскаго журнала „ОВИТЪ“, Тифлисъ. Արտասահմանից՝ Rédaction de journal arménien «HOVIT», Tiflis, (Caucase, Russie).
(ա.օ.) 1196. 5—5

ՅՕԳՈՒՅՑԱՒԸ ԵՒ ՈՍԿՐԱՅՑԱՒԸ,
եթէ մրսելուց են առաջացել, բժշկվում են
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԵՂՈՒԿՈՎ—
ՄԱԳՕ
Փորձված միջոց քրոնիկական և սուր ցաւերի դէմ։ (Պատրաստ. Ղրիմում)։ Ծախվում է դեղատներում և դեղատնային շատ խանութներում։
ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Եղբ. Ն. եւ Ի. ԱՐԵՇԵՎՆԵՐ
Հասցէն՝ МОСКВА, Тверская, Настасьинскій пер., д. 7, кв. 2, отд. 32. Տելեֆոն 286—23.
Բրոշիւրներն ուղարկվում են ձրի։ Զը բժշկվողները բժշկական վկայական ներկայացնելուց՝ իրանց փողը կարող են յետ ստանալ։
Գները՝ առանց ճանապարհածախքի՝ մեծ սրուակը 1 ր. 50 կ.։ Ուղարկ. ենք վերադիր վճ.։
(հ. կ.) (M. 455916) 1124. 10—9

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, ապիշաներ, ծրագիրներ, հարգանական հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԱՆԱՁԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ԳՐԻՖՍ-ԿՈՒՐՍԵՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆոն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.